



ՀԱՅ ԱՍՏ ԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

13 ապրիլի 2017 թվականի N 367 - Ն

ՀԱՅ ԱՍՏ ԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅ ԵՄԲԵՐԻ 26-Ի N 1087-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅ ՈՒՄՆԵՐ
ԿՍԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի նոյեմբերի 26-ի «Հանրապետական գործադիր մարմինների և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների՝ արտասահման գործուղումների մասին» N 1087-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումներ՝

1) որոշման 3-րդ կետը «հավելվածի» բառից հետո լրացնել «, որը ներկայացնելուց հետո մեկօրյա ժամկետում հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության www.e-gov.am կայքի «Գործուղումների հաշվետվություններ» բաժնում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվությունը պարունակում է պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնի տեղեկություններ» բառերով:

2) որոշումը 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով:

«3.1. Հաշվետվությունը սույն որոշման 3-րդ կետով նախատեսված՝ հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ պարունակելու դեպքում՝ ներկայացնողի կողմից հաշվետվության առաջին էջի վերևի մասի աջանկյունում նշվում է «Հրապարակման ենթակա չէ» գրառումը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մայիսի 1-ից:

ՀԱՅ ԱՍՏ ԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ
2017 թ. ապրիլի 13
Երևան

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

